ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

VII Ա դասարանի նախագծային ուսուցման

Ուսուցչուհի՝ Շահանե Հարությունյան

Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի VII Ա դասարանի աշակերտների հետ՝

1. Ավագյան Մանե
2. Գալստյան Աննա
3. Դավթյան Սոնա
4. Եղիազարյան Մարի
5. Բաքոյան Դավիթ
6. Հակոբյան Էլեն
7. Մանուկյան Սուրեն
8. Մարգարյան Անի
9. Խաչատրյան Մարիանա

նոյեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 22-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ նախագծային ուսուցում «Վանի հայոց թագուհիները » թեմայով: Մեր նպատակն էր ծանոթանալ Վանի թագավորության ավելի քիչ ուսումնասիրված թագուհիներին: Վերլուծել Վանի լեգենդար թագուհիների կերպարները և նրանց ավանդը Հայաստանի պատմության մեջ: Զարգացնել պատմական հետազոտության և ներկայացման հմտությունները:

Նախագիծն իրականացնելու համար նախատեսված էր 6 շաբաթ:Աշխատանքը սկսելու համար նախ անհրաժեշտ էր ծանոթանալ Վանի թագավորությանը:Սովորողները տեղեկություններ հավաքեցին Վանի թագավորության արքաների և թագուհիների մասին:Դիտեցին կարճ տեսանյութեր թեմայի վերաբերյալ:Այնուհետև բաժանվեցին 3 խմբի,յուրաքանչյուր խմբում 3 հոգի և ստացան հստակ հրահանգ՝ լեգենդներից և պատմական աղբյուրներից օգտվելով տեղեկություններ հավաքել Վանի թագուհիների վերաբերյալ:Ուսումնասիրել և վերլուծել Վանի հայկական թագավորության քաղաքականության և մշակույթի մեջ նրանց ունեցած ավանդը: Ակտիվ հետազոտական և պրպտողական գործունեության ընթացքում սովորողները հավաքեցին մեծ քանակությամբ տեսական տեղեկություններ Վանի թագավորության արքաների վերաբերյալ ,բայց Վանի թագավորության թագուհիների վերաբերյալ տեղեկությունները շատ քիչ էին,գրեթե չկար: Հիշատակվում էին միայն Թարիրիա և Կակուլի թագուհիների անունները:Իմ ուղղորդմամբ սկսեցին տեղեկություններ փնտրել գեղարվեստական աղբյուրներում: Սովորողները գտան Հայկ Խաչատրյանի «Հայոց 150 թագուհիները» գիրքը և մեր հավաքած պատմական փաստերին միախառնելով ասքերն ու հեղինակի երևակայությամբ շաղախված զրույցները գրեցին սցենարը և ներկայացրին իրենց աշխատանքները:

Անհրաժեշտություն առաջացավ այցելելու Էրեբունի թանգարան, որտեղ սովորողները տեսան Վանի թագավորության ժամանակաշրջանի գտածոներ,բազմաթիվ ոսկե ականջօղեր, արծաթե ապարանջաններ, սափորներ, կարասներ,կենցաղային իրեր:Թանգարանում իր տեղն էր գտել նաև ճարտարապետ, վերակազմող Ռուբեն Սարգսյանի կողմից արված ազնվական ուրարտուհու հագուստի

վերակազմությունը, որը աշակերտներին շատ օգնեց թագուհիների իրենց կերպարները ստանալու հարցում:Առանձնահատուկ ուշադրություն դարձրեցին Մենուա և Արգիշտի արքաներին վերաբերող տեղեկույթին,քանի որ մարմնավորելու էին նաև այդ արքաների կերպարները:

Օրը հագեցած էր և տպավորություններով լի: Անասելի մեծ էր ցանկությունը լինելու Էրեբունի ամրոցում:Ժամանակի անիվը սովորողներին տարավ դեպի Վանի թագավորության ժամանակներ և արդեն իսկ կանխորոշեցին իրենց նախագծի վերջնարդյունքը՝ ստեղծել Վանի հայոց թագուհիների կյանքի և գործունեությանը վերաբերող տեսանյութ: Սովորողները իրենց ստեղծագործ մտքի շնորհիվ ստացան կերպարները՝ ուշադրություն դարձնելով հագուստներին,դետալներին և փոքրիկ դերային խաղի միջոցով նկարահանեցին իրենց տեսանյութը: ՝,Վանի հայոց թագուհիներրե վերնագրով: Նախագծային աշխատանքը ներկայացնելուց հետո ծավալվեց քննարկում,որի ընթացքում ուսուցիչների և աշակերտների կողմից հնչեցին հետաքրքիր առաջարկներ և գնահատականներ կատարված աշխատանքի վերաբերյալ:

Շնորհակալություն

405թ
ՀԱՅԱՍՏԱՆ